ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Mega Brand LLC-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/66 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Արամ Խաչատրյան համերգասրահի բեմի ձայնային համակարգը բաղկացած է բարձրախոսներից, ձայնագրության հնարավորությամբ ձայնի ղեկավարման վահանակից, ուժեղարարներից, ձայնագության համար նախատեսված պարագաներից, խոսափողերից, ամրակային դետալներից և փոխարկիչներից, մալուխներից և պարագաներից: Նշված բարձրախոսները, ձայնագրության հնարավորությամբ ձայնի ղեկավարման վահանակը, ուժեղարարները, ձայնագության համար նախատեսված պարագաները, խոսափողերը, ամրակային դետալները և փոխարկիչները, մալուխները և պարագաները պետք է համապատասխանեն կից ներկայացված տեխնիկական առաջադրանք-1-ին: Եթե անհրաժեշտություն առաջանա, Մատակարարը պարտավոր է իր հաշվին և իր միջոցներով տրամադրել տեխնիկական առաջադրանք-1-ում չնշված՝ լրացուցիչ սարքեր, սարքավորումներ, մասեր և պարագաներ, որ սույն համակարգը գործի: Լրակազմում նշված ապրանքների երաշխիքային ժամկետները՝ առնվազն 1 տարի: Լրակազմում նշված ապրանքների համար պարտադիր է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի առկայությունը: Լրակազմում նշված ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Լրակազմի տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը, մոնտաժումը, ըստ անհրաժեշտության ծրագրավորումը, փորձարկումը, համակարգի առաջին գործարկումը, ինչպես նաև համապատասխան մասնագետի հրահանգավորումը իրականացվում է Մատակարարի կողմից: Լրակազմում նշված ապրանքների տեխնիկական բնութագրերում տրված են դրանց նվազագույն պահանջները (կամ առավելագույն պահանջները, եթե խոսքը գնում է բացասական ցուցանիշի մասին. բացասական

	ցուցանիշները նշված են մեկ աստղանիշով՝ «*»): Իսկ եթե ցուցանիշը սահմանում է միջակայք, ապա առաջարկվող ապրանքը պետք է ներառի ցուցանիշի նշված միաջակայքը: Եթե ցուցանիշը սահմանում է միաջակայք և նշված է երկու աստղանիշ՝ «**», ապա առաջարկվող ապրանքի նշված ցուցանիշը պետք է գտնվի տվյալ միջակայքում: Համակարգում ներառվող սարքերը, սարքավորումները, մասերը և պարագաները (ներառյալ դրանցում կիրառվող տեխնոլոգիաները) պետք է լինեն համատեղելի միմյանց հետ, ինչպես նաև լինեն տարածված, այսինքն՝ տեխնոլոգիաները կիրառվեն 2-ից ավել արտադրողների կողմից: Ապրանքների տեղաբաշխումը, լարանցումները և գունային լուծումները պետք է համաձայնեցնել Գնորդի հետ՝ կապված տարածքի առանձնահատկություններից: Մասնակիցը կարող է տեղում տեսնել և ծանոթանալ տեղաբաշխման, լարանցումների և գունային լուծումների հնարավոր տարբերակներին:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Mega Brand LLC в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/66 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	